ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 մարտի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

33
(3242)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ–Ի ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՇԱՌՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պետական կառավարման համակարգի վերնախավը կրկին ստացել է պարգեւավճարներ, սակայն այս անգամ առավել «կառավարելի» ձեւաչափով: Նիկոլ Փաշինյանի գլխավորած իշխանությունը փոխել է խոշոր պարգեւավճարների տրամադրման մոտեցումը՝ դրանք բաժանելով ամսական վճարումների, որպեսզի տարեվերջի սկանդալն ու դժգոհության ալիքը էլի չբարձրանան, երբ հայտնի դարձավ, որ բարձրաստիճան պաշտոնյաները ստացել էին 3-ից մինչեւ 11 մլն դրամի հասնող պարգեւատրումներ: «Ժողովուրդ» օրաթերթի խորհրդարանական աղբյուրների փոխանցմամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորները ստացել են շուրջ 670 հազար դրամի պարգեւավճար մարտ ամսվա համար: ԱԺ աշխատակազմի մեծ մասի դեպքում հավելավճարները կազմել են 40-ից մինչեւ 400 հազար դրամ: Իսկ գործադիր իշխանության համակարգում պարգեւավճարների չափերը էականորեն բարձր են. նախարար, փոխնախարար, վարչության պետ, բաժնի պետ. ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ այստեղ պարգեւավճարները սկսվում են ամսական 3 մլն դրամից: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ բարձրաստիճան պաշտոնյաները աշխատավարձին զուգահեռ ամեն ամիս այսպիսի մեծ թվով պարգեւավճարներ կստանան՝ իբրեւ աշխատավարձի բաղկացուցիչ մաս, բայց նախագիծը հաստատված է միայն երկրորդ կիսամյակի համար՝ մինչեւ ընտրություններ՝ մինչեւ հունիս: Ստացվում է յուրօրինակ ընտրակաշառք պետական համակարգին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել ՀՀ պաշտոնյաների դրամական միջոցների եւ ունեցվածքի վերաբերյալ պաշտոնական հայտարարագրերը: Այս անգամ ուսումնասիրել ենք ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վրեժ Գալոյանի հայտարարագրերը՝ սկսած պաշտոնի ստանձման պահից մինչեւ 2024 թվականը, եւ պարզել, որ նա պետական համակարգի հին կադրերից է, որը, լինելով պետական պաշտոնյա, տարիների ընթացքում ձեւավորել է զգալի ֆինանսական միջոցներ եւ գույք: Վրեժ Գալոյանը պաշտոնին նշանակվել է 2020 թվականի մայիսի 11-ին: Մինչ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնին նշանակվելը, Գալոյանը եղել է տեսչական մարմնի ջրերի, մթնոլորտի, հողերի թափոնների եւ վտանգավոր նյութերի վերահսկողության վարչության պետը: Այսպիսով, 2020 թվականի պաշտոնը ստանձնելու վերաբերյալ հայտարարագրում նշված է, որ Էրեբունի վարչական շրջանում մեկ ավտոտնակ ունի: Բանկային հաշվին առկա մնացորդը կազմել է 267 հազար դրամ: Գալոյանի կանխիկ գումարը կազմել է 10 մլն դրամ, 60 հազար դոլար, 1.5 մլն ռուսական ռուբլի:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Առողջապահական ոլորտում աճում են ընդդիմադիր տրամադրությունները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանության ներսում փակ քննարկումներ են անցկացվել երկու նախարարությունների հնարավոր վերամիավորման թեմայով: Խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության եւ ՀՀ առողջապահության նախարարության հնարավոր միավորմանը, որի վերաբերյալ, ըստ նույն աղբյուրի, արդեն շրջանառվում է ներքին նախագիծ: Թերթի տեղեկություններով՝ նախաձեռնության հիմնական ջատագովը համարվում է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը, որը ձգտում է սոցիալական եւ առողջապահական ոլորտների կառավարման մոդելը կենտրոնացնել մեկ գերատեսչության շրջանակում՝ իր ձեռքին: Ըստ «Ժողովուրդ»-ի աղբյուրների՝ համակարգի ներսում արդեն նկատվում է անհանգստություն հնարավոր կառուցվածքային փոփոխությունների շուրջ: Խոսքը վերաբերում է հատկապես առողջապահության ոլորտում ներգրավված տասնյակ հազարավոր աշխատակիցներին, որոնք անհանգիստ են հնարավոր օպտիմալացումների հեռանկարով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում վերջին շաբաթներին ներկայացվում է որպես պետական կառավարման մշակույթի նոր դրսեւորում՝ շարունակական կրթության օրինակ: Սակայն նրա վարքը ՀՀ քաղաքացիների հետ շփման մեջ հակադրվում է կրթված մարդու վարքին: Կիրակի օրը՝ Երեւանի մետրոյում քարոզարշավի ընթացքում, նա լարված եւ կոշտ զրույց ունեցավ արցախցի մի կնոջ՝ Արմինե Մոսիյանի հետ՝ նրան մեղադրելով երկիրը թողնել փախչելու մեջ: Մինչդեռ նա զոհված հերոսի դուստր է, որը մինչեւ վերջին օրը իր հայրենիքում ապրելու իրավունքի համար կռիվ է տվել: Ասել, որ քննադատվեց Փաշինյանի պահվածքը, նշանակում է՝ ոչինչ չասել: Անգամ քաղաքական գործընթացներին ընդգծված ներտություն ցուցաբերող Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը արձագանքեց՝ հորդորելով զսպվածություն եւ զգայունություն պահպանել: Բայց ուշագրավն այս իրավիճակում այն է, որ Նիկոլ Փաշինյանը կրթվում է, վերապատրաստվում. հետաքրքիր է՝ նրան ի՞նչ են սովորեցնում ակադեմիայում, որ չի հասկանում՝ ինչպես դրսեւորի իրեն հանրային տիրույթում: Այս հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Խաչատուր Ղազեյանի հետ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԵՍ ԲԱՐՁՐ ԵՄ ԳՆԱՀԱՏԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»

ArmLur.am-ը զրուցել է ՀՀ Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանի հետ:

-Պարոն Պապոյան, վերջերս նորից սկսվեց ակտիվ քննարկվել Հայաստանի Մեծամորի ատոմակայանի փակման կամ փոխարինման հարցը: Այս անգամ ԱՄՆ-ն է շահագրգռված այս հարցով: ԱՄՆ-ն առաջարկել է այն փոխարինել ամերիկյան մոդուլային ատոմակայանով: Սա ինչպե՞ս է անդրադառնալու Հայաստանի տնտեսության վրա: Նախարարությունն ի՞նչ ազդեցություն է ունենալու այս գործում:

-Նախ սկսենք նրանից, որ ատոմակայանը նվազագույնը 10 տարի իր կյանքը երկարաձգում է: Հետեւաբար, նույնիսկ միջնաժամկետում մենք գործող ատոմակայանով աշխատելու ենք: Ինչ վերաբերում է նոր ներդրումներին, ապա (դուք նշեցիք ԱՄՆ-ի անունը) մենք միայն ամերիկյան առաջարկ չունենք: Մենք ունենք կորեական, ֆրանսիական, ամերիկյան, չինական, կարծես նաեւ ռուսական (չեմ հիշում հստակ) առաջարկներ եւ ընտրելու ենք այն առաջարկը, որը Հայաստանի Հանրապետության պետական շահին ամենահամահունչը կլինի: Այսինքն՝ լավագույն արդյունք՝ հնարավոր ամենացածր գնով, բայց ոչ թե ամենացածր գինն ենք ընտրելու, այլ լավագույն արդյունքը, որը կարող ենք ստանալ համարժեք գնի պարագայում: Այդ առումով, կարծում ենք, որ ինքը՝ էներգետիկ անվտանգությունը եւ, ընդհանրապես, էներգետիկ անկախությունն ինքը տնտեսության ողն է, հիմնասյուներից է եւ կայուն էներգետիկ մատակարարումներ ունենալ, առանց դրա ուղղակի հնարավոր չէր տնտեսությունը պատկերացնել: Այդ առումով արդեն իր դերակատարումը դժվար է թերագնահատել փաստացի: Ինչ վերաբերում է ներդրումներին, բնականաբար կլինեն նոր ներդրումներ, եւ դրանք իրենց տնտեսական էֆեկտը կունենան, ինչը նույնպես դրական ենք գնահատում:

-Դուք բարձր եք գնահատել Հայաստան-Ադրբեջան փոխհարաբերությունները տնտեսական կապերի համատեքստում, որ Հայաստան ադրբեջանական բենզին է ներմուծվում, որը, Ձեր գնահատմամբ, բարձր որակի է: Պարոն Պապոյան, քաղաքացիները չենք կիսում Ձեր տեսակետը եւ բողոքում են, որ անորակ է ու նաեւ փչացնում է մեքենաների տարբեր սարքավորումներ: Ձեզ նմանատիպ բողոքներ ներկայացվե՞լ են: Դուք ինչպե՞ս եք սա բացատրում: Նորից պատրաստվո՞ւմ եք ադրբեջանական բենզին գնել:

-Ես բարձր եմ գնահատել խաղաղությունը: Ես բարձր եմ գնահատում, որ զինվորներ չեն զոհվում: Ես դա եմ բարձր գնահատել: Ես բարձր եմ գնահատել, որ ավելի քան երկու տարի զինվոր չի զոհվել ու չի զոհվելու հաջորդ երկու տարին էլ, 22 տարին էլ, 122 տարին էլ: Իսկ այդ պայմանական խաղաղության պայմանների ժամանակ տասնյակներով, հարյուրներով հայաստանցի զինվորներ են զոհվել: Մյ դրա համար եմ անում այդ ամեն ինչը: Նրա համար, որ մեր երեխաները չզոհվեն, ու կշարունակեմ անել, որովհետեւ նրանք, ովքեր ուրիշի երեխաների արյան վրա ձեռք են տաքացնում, իրենք իրենց երեխաներին վաղուց կամ ազատել են բանակից, կամ դարձրել են Ամերիկայի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի քաղաքացիներ:

Հիմա անդրադառնամ քաղաքացիների բողոքին. մենք այդպիսի բողոք չենք ստացել, բայց ունենք ուսումնասիրություն, հետազոտություն, ընդ որում՝ բենզինն էլ, որ գալիս է Հայաստան, այդ բենզինը անցնում է նույն փորձաքննությունը, եւ որակը բարձր որակի է եղել: Սա մեկ, երկրորդ՝ ընկերություն կա, ասում է՝ ինքը եվրոպական բենզին է վաճառում, բայց իրականում ադրբեջանական բենզին է վաճառում: Ադրբեջանից ձեռք է բերել, եւ մենք շատ հստակ դրել ենք խնդիր՝ ինքը կամ պիտի հայտարարի, որ դա ադրբեջանական բենզին է, կամ չի կարողանա վաճառել, որովհետեւ դու չես կարող մարդկանց խաբել, փողը փոխանցես Ադրբեջան, ադրբեջանական բենզինը բերես Հայաստան, անունը դնես եվրոպական: Վաճառես ու սուտ հայրենասեր խաղաս: Ես դա ոչ մեկին թույլ չեմ տա:

-Ո՞ւմ նկատի ունեք:

-Ես ում որ նկատի ունեմ, այդ տեղեկատվությունը թափանցիկ եւ ոչ թափանցիկ փոխանցված է, եւ իրենք շատ լավ գիտեն դրա մասին:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՊԱՇՏՈՆ ԵՆ ՏԱԼՈՒ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ խորհրդարանը դատապարտվում է քննարկել Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը:

Մեր տեղեկություններով՝ կառավարությունն այդ պաշտոնում առաջադրել է Ներսես Երիցյանի թեկնածությունը:

Խոսքը մի կառույցի մասին է, որը առնչվում է տեղեկատվության հոսքերին, տվյալների կառավարմանը եւ թվային համակարգերի վերահսկմանը: Այսինքն՝ այն դաշտին, որտեղ այսօր ձեւավորվում է ոչ միայն տեխնոլոգիական, այլ նաեւ քաղաքական եւ հանրային իրականությունը:

Ըստ հանձնաժողովի կառավարման նոր կարգավորման համաձայն՝ օպերատիվ-հետախուզական մարմինները պարտավորվում են աջակցել Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին՝ կիբեռանվտանգության բնագավառում իրավախախտումների կանխման եւ բացահայտման ուղղությամբ:

Եւ հենց այստեղ է սկսվում ամենահետաքրքիրը:

Ինչո՞ւ է կառավարությունը այսպիսի զգայուն ոլորտի համար ընտրել հենց այս թեկնածուին: Արդյո՞ք սա զուտ մասնագիտական ընտրություն է, թե՞ հերթական նշանակումը, որտեղ առաջնայինը վստահելիությունն է, ոչ թե անկախությունը: Չպետք է մոռանալ՝ ով է վերահսկում է տեղեկատվական համակարգերը: Իսկ նման լծակների կենտրոնացումը մեկ քաղաքական թիմի շրջանակում վաղուց արդեն դարձել է հանրային անհանգստության թեմա:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՆԻՆ

ՀՀ-ն հումանիտար օգնություն է ուղարկել Իրանին, հիմնականում՝ դեղորայքի տեսքով: Այս մասին ԱԺ-ում արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում ասել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը: Հիշեցնենք՝ ԱՄՆ-ն եւ Իսրայելը փետրվարի 28-ի առավոտյան սկսեցին հարվածներ հասցրել Իրանին: Սպանվեցին երկրի գերագույն հոգեւոր առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեին, Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Աբդուլռահիմ Մուսավին, պաշտպանության նախարար Ազիզ Նասիրզադեն, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) հրամանատար Մոհամմադ Պակպուրը եւ պաշտպանության խորհրդի քարտուղար Ալի Շամխանին: Երկրում 40-օրյա սուգ է հայտարարվել:

ՆԻՍՏ Է ՀՐԱՎԻՐԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ երեկ ԱԺ խորհուրդը նիստ է հրավիրել:

Բանն այն է, որ այսօր խորհրդարանում մեկնարկելու է ԱԺ հերթական նստաշրջանը եւ խորհուրդը պետք է հաստատի նիստերի օրակարգը:

Մենք տեղեկացանք, որ օրակարգի քննարկումից հետո ԱԺ ՔՊ խմբակցությունը նիստ է հրավիրել:

Ի դեպ, խորհրդարանական նիստերում նախատեսված են մի քանի կառույցների ղեկավարների ընտրություններ:

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԵՆ ԱՌԱՋԱԴՐԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այսօր մեկնարկող Ազգային Ժողովի հերթական նստաշրջանում Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամի ընտրություն պետք է կայանա:

Մինչ իշխանական ճամբարը դեռ լուռ է, ընդդիմությունն արդեն հստակեցրել է իր քայլը: «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները միասնական թեկնածու են առաջադրել՝ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադեւոս Ավետիսյանին:

Թեկնածությունը ներկայացնելու է նույն խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը:

Սակայն հարցը մնում է բաց՝ արդյոք իշխանությունը կհամաձայնի ընդդիմության թեկնածուին, թե այս ընտրությունն էլ կվերածվի հերթական ձեւական գործընթացի, որտեղ արդյունքը կանխորոշված է լինելու:

Հանձնաժողովի անդամի քվեարկությունը, մեծ հաշվով, պատասխան կտա ոչ թե թեկնածուի հնարավորություններին, այլ մեկ պարզ հարցի՝ արդյոք այս կառույցներն ունեն որեւէ իրական անկախություն, թե շարունակում են մնալ քաղաքական մեծ խաղի հերթական գործիքը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴԻՄԵԼ Է ՄԱԿ-ԻՆ

Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին մարտի 22-ին նամակ է հղել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշին եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներին՝ դատապարտելով ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական հարձակումները Իրանի խաղաղ միջուկային օբյեկտների վրա եւ պահանջելով ՄԱԿ-ից անհապաղ գործողություններ միջազգային իրավունքի եւ նորմերի պաշտպանության համար:

Նամակում նշվում է.

- Մարտի 1-ին, 17-ին եւ 21-ին երկու միջուկային օբյեկտներ՝ Նատանզ եւ Բուշեհր կայանները, ենթարկվել են ռազմական հարձակումների:
- Միջուկային օբյեկտների անվտանգությունն ու շրջակա միջավայրը վտանգվել են, ինչը խախտում է ՄԱԿ-ի կանոնադրությունն ու միջազգային իրավունքի նորմերը:
- Իրանը հորդորում է ՄԱԿ-ին պահանջել՝ ԱՄՆ-ից եւ Իսրայելից անհապաղ դադարեցնել հարձակումները, վերականգնել վնասները եւ ապահովել գույքային եւ մարդկային փոխհատուցում:
- Նամակում հիշեցվում է նաեւ, որ միջուկային խաղաղ ծրագրերը պաշտպանված են ՆԱԹԳ եւ ՄԱԿ-ի կանոնակարգերով, եւ ցանկացած հարձակում դրանք ուղղակի վտանգի է ենթարկում:
- Իրանը պահանջում է, որ Իսրայելը հրաժարվի միջուկային զենքի գերշահագործումից եւ բոլոր միջուկային օբյեկտները տեղադրի ՄԱԳԱՏԷ-ի վերահսկողության ներքո:

Արաղչիի խոսքով՝ հարձակումները լուրջ մարտահրավեր են ոչ միայն Իրանի խաղաղ միջուկային ծրագրերին, այլ նաեւ տարածաշրջանային եւ միջազգային խաղաղությանը ու անվտանգությանն ու նորմերին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հավաստել է իր իրանցի գործընկեր Մասուդ Փեզեշքիանին, որ Մոսկվան կմնա Իրանի նվիրված ընկեր եւ վստահելի գործընկեր:

Կիրակի օրը Պուտինը Նորուզի կապակցությամբ ուղարկել էր շնորհավորական ուղերձ Փեզեշքիանին՝ ցանկանալով, որ Իրանի ժողովուրդը այս դժվարին փորձությունները հաղթահարի պատվով:

Ուղերձում Պուտինը ընդգծել էր, որ Ռուսաստանը շարունակելու է լինել Իրանի կողքին որպես վստահելի գործընկեր, հատկապես այս մարտահրավերային ժամանակահատվածում:

Հիշեցնենք, որ փետրվարի 28-ին ԱՄՆ-ը եւ Իսրայելի վարչակարգը ռազմական լայնածավալ գործողություն էին սկսել Իրանի դեմ՝ սպանելով Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Սեյեդ Ալի Խամենեին եւ մի շարք բարձրագույն ռազմական հրամանատարների եւ քաղաքացիների:

Հարձակումները ընդգրկել են ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ենթակառուցվածքների լայնածավալ օդային հարվածներ:

Պատասխանի շրջանակում Իրանի զինված ուժերը իրականացրել են հակահարվածային գործողություններ՝ թիրախավորելով ամերիկյան եւ իսրայելական դիրքերը բռնազավթված տարածքներում եւ տարածաշրջանի բազաներում:

ՔԱՐՏԵՋՈՒՄ ԱՐՑԱԽԸ ՉԿԱ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵՑ

Մարտի 22-ին Նիկոլ Փաշինյանը եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թիմի անդամները հերթական ներկուսակցական ֆարոզն էին իրականացնում՝ այս անգամ նաեւ Երեւանում: Հայաստանի ֆարեզը, որ կրում է իրական Հայաստանի գաղափարը, Փաշինյանը մետրոյում փորձել է նվիրել արցախցի Արմինե Մոսիյանին: Վերջինս հրաժարվել է վերցնել ֆարեզը՝ պատճառաբանելով, որ ֆարեզում Արցախը չկա:

Նիկիոլ Փաշինյանը նախ հետ է քաշվել՝ ընդունելով երիտասարդ կնոջ մոտեցումը, ապա չի հանգստացել եւ նորից է առաջարկել՝ պնդելով, որ իր երեխան տվյալ քարտեզում է մեծանալու: Երիտասարդ կինը նորից է պնդել, որ ինքը չի ընդունում Հայաստանի կիսատ քարտեզը եւ նշել՝ որ ինքը՝ Փաշինյանն է դավաճանել իրենց՝ արցախցիներին եւ հանձնել Արցախը: Վեճ է առաջացել: Փաշինյանը բարկացել է եւ մատ թափ տալով ասել, որ փախածներով իրեն չմեղադրեն Ղարաբաղի հանձնման մեջ, եւ որ ՀՀ քաղաքացիների միլիարդավոր հարկերի հաշվին արցախցիները ուզում էին ապրել Արցախում:

Տեղեկացնենք, որ Արմինե Մոսիյանը մինչեւ վերջ ապրել է Արցախում: 2023 թվականի սեպտեմբերի 24-ից հետո ինքը եւս բռնի տեղահանվել է հայրենի հողից: Նշենք նաեւ, որ Արմինեի հայրը՝ Մերուժան Մոսիյանը, Արցախյան առաջին պատերազմի մասնակից է, եղել է Մարտունու շրջանի 26-րդ մոտոհրաձգային գումարտակի հրամանատար: Ջոհվել է 1993 թվականին օգոստոսի 23-ին: Հետմահու պարգեւատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

Միջադեպից կարճ ժամանակ անց Նիկոլ Փաշինյանը տեսանյութ է հրապարակել, որտեղ ներողություն է խնդրել եւ արցախցի Արմինե Մոսիյանից, եւ նրա երեխայից, որն այդ միջադեպի ժամանակ ներկա է գտնվել:

«Հարգելի տիկին Մոսիյան: Ես ձեզնից եւ ձեր որդուց ներողություն եմ խնդրում էմոցիաների համար: Եւ հույս ունեմ, որ նորից առիթ կունենանք մետրոյում կամ որեւէ տեղ հանդիպելու ու հանգիստ խոսելու: Իմիջիայլոց, ես կուզենամ էդ խոսակցությունը տեղի ունենա: Ես գիտեմ, որ դուք կմերժեք եւ հետեւից երկու կոպիտ բառ էլ կասեք: Ես դա ընդունում եմ խոնարհությամբ: Բայց եթե հանկարծ ձեր մտքով անցնի, որ արժի, որ մենք տեսախցիկը, հեռախոսը դնենք, պայմանավորվենք առանց էմոցիաների խոսենք, իմացեք, որ ձեր տրամադրության տակ եմ եւ ընդունում եմ էդ հրավերը: Կրկին ուզում եմ ներողություն խնդրել, ընդունում եմ, որ ինչոր բան էնպես չեմ ասել, ճիշտ ժեստիկուլյացիայով չեմ ասել, ճիշտ տոնայնությամբ չեմ ասել, ճիշտ դեմքի արտահայտությամբ չեմ ասել»,- տեսանյութում ասել է Նիկոլ Փաշինյանը՝ ՔՊ-ականների հետ սեղանի շուրջ նստած: Ապա երեկոյան եւս մեկ անգամ ներողություն է խնդրել արցախցի երիտասարդ կնոջից, նրան հրավիրել Կառավարություն՝ այս անգամ ֆբ-յան գրառում կատարելով:

«Հարգելի տիկին Արմինե Մոսիյանին ու իր որդուն հրավիրում եմ ՀՀ Կառավարություն՝ ուղիղ եթերում իրենից ու իր որդուց պաշտոնապես ներողություն խնդրելու: Եթե Կառավարություն գալը իր համար ընդունելի չէ, պատրաստ եմ նույնը անել Երեւանի մետրոպոլիտենում, իրեն հարմար ժամի՝ կրկին ուղիղ եթերում: Պատրաստ եմ նույնը անել իր բնակության կամ աշխատանքի վայրում»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԼՈՒՐՋ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Մերձավոր Արեւելքի պատերազմը «ծանր վնաս» է հասցրել նավթային եւ էներգետիկ ավելի քան 40 օբյեկտների՝ 9 երկրներում, եւ միջազգային էներգետիկ գործակալության (IEA) ղեկավար Ֆաթիհ Բիրոլը զգուշացրել է, որ այդ ճգնաժամը խորը ռիսկեր է առաջացնում գլոբալ տնտեսության համար: «Անհրաժեշտ չէ ակնկալել, որ որեւէ երկիր կհաղթահարի այս ճգնաժամը, եթե այն շարունակվի այս ուղով»,- ասել է Բիրոլը՝ Ավստրալիայի Ազգային մամուլի ակումբում՝ Կանբերրայում: Նա նշել է, որ Մերձավոր Արեւելքի ճգնաժամի համատեղ ազդեցությունը ավելի ծանր է գնահատվում, քան 1970-ականների երկու նավթային ցնցումները եւ Ռուսաստանի ու Ուկրաինայի պատերազմի գազային շուկաների ազդեցությունը:

Բիրոլը հավելել է. «Գլոբալ տնտեսության կարեւոր ուղիները, ինչպիսիք են նավթաքիմիկատները, պարարտանյութերը, սուլֆուրը, հելիումը՝ նրանց առեւտուրը խափանվել է, ինչը լուրջ հետեւանքներ է ունենում տնտեսության համար»: Նավթի գներն աճում են, քանի որ Իրանի պատերազմի ավարտի նշաններ չեն երեւում: Իսրայելը երկուշաբթի առավոտյան նոր հարվածների ալիք է սկսել Թեհրանի ուղղությամբ, իսկ Իրանը սպառնացել է հարվածել Մերձավոր Արեւելքի էլեկտրակայաններին այն դեպքում, եթե ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը իրականացնի իր սպառնալիքը, այն է՝ պայթեցնել Իրանի էլեկտրակայանները:

ԱՄՆ WTI նավթային գինը գերազանցել է 100 դոլարը մեկ բարելի դիմաց, իսկ միջազգային Brent նավթը գնահատվել է ավելի քան 113 դոլար մեկ բարելի դիմաց:

Բիրոլը նշել է, որ փետրվարի 28-ին սկսված Իրանի պատերազմի հետեւանքով 9 երկրներում 40 էներգետիկ օբյեկտ «ծանր կամ շատ ծանր վնասված» են: Նա նաեւ հայտնել է, որ խորհրդակցում է Եվրոպայի եւ Ասիայի կառավարությունների հետ՝ շտեմարաններից լրացուցիչ նավթ բաց թողնելու հնարավորության վերաբերյալ: «Կտեսնենք, կգնահատենք շուկան, եւ եթե անհրաժեշտ լինի, անպայման դա կանենք»,- ասել է նա:

ԲԱԽՎԵԼ Է ՀՐՇԵՋ ՄԵՔԵՆԱՅԻ

Կիրակի երեկոյան ԼաԳուարդիա օդանավակայանում Jazz Aviation-ի սպասարկած Air Canada-ի ինքնաթիռը բախվել է Port Authority-ի հրշեջ մեքենայի: Վթարի հետեւանքով զոհվել են օդաչուն եւ երկրորդ օդաչուն, իսկ տասնյակ մարդիկ վիրավորվել են: Ինքնաթիռը տեղափոխում էր 72 ուղեւոր եւ 4 անձնակազմի անդամ: Վիրավորներից 41-ը տեղափոխվել են հիվանդանոց, որոնցից 32-ը արդեն դուրս են գրվել: Հրշեջ մեքենայի երկու անդամ գտնվում են կայուն վիճակում:

Վթարը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ հրշեջ մեքենան ուղեւորվում էր մեկ այլ չվերթի օգնության՝ օդանավում հոտի ահազանգի պատճառով: FAA-ն օդանավակայանը փակել է առնվազն մինչեւ երկուշաբթի ժամը 14:00՝ հետաքննությունը շարունակելու համար: Տեղում ինքնաթիռի կռունկի հատվածը ծանր վնասված է: Air Canada-ն հաստատել է վթարը՝ նշելով, որ այն տեղի է ունեցել Montreal-ից ԼաԳուարդիա հասած 8646 չվերթի ժամանակ: Արդյունքում օդանավակայանում ժամանակավորապես դադարեցվել են բոլոր թռիչքները, իսկ հետաքննությունը շարունակվում է:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է

Ուկրաինական հետախուզական անօդաչու թռչող սարքը տեսանկարահանել է ռուսական կործանիչի կողմից իրականացված հարձակումը Ուկրաինայի զինված ուժերի ինքնաթիռի վրա: Տեսանյութը հրապարակվել է «Осведомитель» Telegram ալիքում՝ ներկայացնելով օդային մարտի պահը: Այս մասին հայտնում են ռուսական լրատվամիջոցները:

Կադրերում երեւում է, թե ինչպես ռուսական կործանիչը, թաքնված լինելով գերծանր բարձրության վրա, հանկարծակի բարձրանում է եւ արձակում «օդ-օդ» դասի հրթիռ՝ թիրախավորելով հակառակորդի ինքնաթիռը: Հարձակումը, ըստ հրապարակման, իրականացվել է դարանակալման մարտավարությամբ:

Աղբյուրի տվյալներով՝ գործողությանը կարող էր մասնակցել Cy-35 կործանիչ, որի բարձրացման արագությունը հասնում է վայրկյանում շուրջ 250 մետրի: Ավելի վաղ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարել էր, որ ռուսական օդատիեզերական ուժերը խոցել են Ուկրաինայի զինված ուժերի Cy-27 կործանիչ, սակայն հարվածի վայրի եւ այլ մանրամասների մասին տեղեկություններ չեն հաղորդվել:

ԿԱՇԱՌՔԻ ԴԻՄԱՑ

ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼ Է ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնի պաշտոնատար անձը, օգտագործելով իր իշխանական եւ ծառայողական լիազորությունները, ապօրինի գործողությունների համար ստացել է կաշառք, ինչպես նաեւ կատարել պաշտոնեական կեղծիք եւ հափշտակություն:

Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ նշված պաշտոնատար անձը Լոռու մարզի բնակչի կողմից նպաստ ստանալու գործընթացը չդադարեցնելու համար 2022 թվականին որպես կաշառք ստացել է նրա մեկ ամսվա նպաստի չափով գումար՝ դրա դիմաց չարձանագրելով վերջինիս կողմից ՍՊԸ-ում աշխատելու եւ խոշոր եղջերավոր անասուններ ունենալու հանգամանքները, ինչպես նաեւ կազմել եւ հաստատել է պաշտոնական շրջանառության ենթակա կեղծ արձանագրություն:

Նախաքննության ընթացքում բացահայտվել է նաեւ հիշյալ պաշտոնյայի կողմից նույն բնակավայրի մեկ այլ բնակչից կրկին մեկ ամսվա նպաստի գումարի չափով կաշառք ստանալու դեպք: Արդյունքում՝ Լոռու մարզի երկու բնակիչներ ստացել են ընդհանուր 786.000 ՀՀ դրամի չափով նպաստի գումար:

Միասնական սոցիալական ծառայության աշխատակցին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ), 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) եւ 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ): Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Մեղադրանքներ են ներկայացվել նաեւ Լոռու մարզի 3 բնակիչներին:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում ավարտվել է Երեւանի կայազորային հոսպիտալի օրդինատորի կողմից իր մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետեւանքով զինծառայողին անզգուշությամբ մահ պատճառելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Երեւանի կայազորային հոսպիտալի օրդինատորը 2024 թվականի հուլիսի 19-ից մինչեւ օգոստոսի 6-ն ընկած ժամանակահատվածում չի իրականացրել հիվանդի մոտ առկա ախտաբանության լիարժեք եւ համապատասխան գնահատում, ինչի հետեւանքով հնարավոր չի եղել կանխել բարդությունների առաջացումը:

Մասնավորապես, չհայտնաբերված երիկամային համակարգի ախտահարումները, երկարատեւ թոքային պաթոլոգիայի վատթարացումը եւ անարդյունավետ բուժումները զինծառայողի մոտ հանգեցրել են Վեգեների համախտանիշի ուշացած ախտորոշմանը:

Այնուհետեւ, հիվանդն ուշացած տեղափոխվել է այլ բազմապրոֆիլային հիվանդանոց, որտեղ հիվանդության արդեն տերմինալ փուլում հաստատվել է «Վեգեների գրանուլեմատոզ» ախտաբանական պրոցեսը, ինչն էլ հանգեցրել է զինծառայողի մահվան:

Երեւանի կայազորային հոսպիտալի օրդինատորի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասով (բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ Է ԳՐԵԼ

Փաստաբան Հարություն Հարությունյանը Դատավորների էթիկայի հանձնաժողովից ազատման դիմում է գրել.

«Հարգարժան դատավորներ, հարգելի գործընկերներ,

ինչպես գիտեք ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքում կատարվել են փոփոխություններ (իմ կարծիքով նաեւ՝ թիրախային փոփոխություններ, քանի որ այն ազդում է բացառապես ինձ վրա), ինչն ինձ կանգնեցրել է երկընտրանքի առջեւ՝ մնալ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովի անդամ, թե զբաղվել փաստաբանությամբ:

Չնայած նրան, որ այդ փոփոխությունները հակասահմանադրական են՝ առնվազն սահմանափակող նորմին հետադարձություն տալու մասով եւ այդ մասով կհաջորդի համապատասխան իրավական գործընթաց, միեւնույնն է, այս պահին պետք է ընտրություն կատարել:

Լինելով ազատ եւ անկախ մասնագիտության տեր՝ հայցելով անխտիր բոլոր դատավորներից յուրաքանչյուրի ներողամտությունը, տեղեկացնում եմ, որ այսօր հրաժարական եմ ներկայացնելու Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամի պաշտոնից:

Հրաժարականը սկիզբ է մի նոր պայքարի, որի նպատակը անկախ դատական համակարգի կերտումն է:

Հարգանքով՝ փաստաբան Հարություն Հարությունյան»:

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՑՄԱՆ ԴԵՊՔ

ՊԾ Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի 2-րդ վաշտի ծառայողները մարտի 18-ին Նուբարաշենի խճուղում հայտնաբերել, ապօրինի թմրանյութ պահելու, օգտագործելու եւ իրացնելու կասկածանքով ձերբակալել եւ, իր վարած մոպեդով հանդերձ, Համայնքային ոստիկանության Նուբարաշենի բաժին են տեղափոխել օտարերկրյա քաղաքացի 28-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտաբերվել է մարիխուաննա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածով 40 փաթեթ՝ ընդհանուր 84,54 գրամ քաշով: Մոպեդը տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք:

Երիտասարդը կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է նախաքննական մարմին:

● *ՀՀ-ում մարտի 18-ից 19-ը բացահայտվել է 148 հանցագործություն, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐ

Տավուշի մարզպետարանում բազում թափուր հաստիքներ կան, որոնք երկար ժամանակ է, որ չեն համալրվում: Մարտի 12-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ կատարել. «Մարտի 12-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմը քանի՞ աշխատող ունի, այդտեղ քանի՞ թափուր հաստիք կա, դրանք համալրելու համար ինչո՞ւ մրցույթներ չեն հայտարարվում»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «2026թ. մարտի 12-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում առկա է 76 հաստիք, որից 10 հաստիք թափուր է: Թափուր հաստիքները համալրելու համար պարբերաբար տրվում է հայտարարություններ՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակով»: Հասկանալի չէ, թե ինչու այդ հայտարարությունները չեն զետեղում նաեւ Տավուշի մարզպետի աշխատակազմի ինտերնետային կայքում, որպեսզի Տավուշի մարզի բնակիչները իրազեկվեն այդ մասին, հնարավորության դեպքում դրանք զբաղեցնեն: Տավուշի մարզպետի աշխատակազմը անմիջական կերպով կառավարում է միայն մարզի հանրակրթական դպրոցները (բացի ավագ դպրոցները եւ վարժարանները) եւ մարզի գյուղական բնակավայրերի պետական բժշկական հիմնարկները: Մարզպետարանը դրանք կառավարում է համապատասխան նախարարությունների՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ու առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Ընդամենը 2 ոլորտ համակառավարելու համար Տավուշի մարզպետի աշխատակազմն ունի 76 հաստիք, որից 66-ը զբաղեցված է:

2018-ին Նիկոլ Փաշինյանի կառավարությունը մարզպետարանները պետբյուջեի համար ավելորդ բեռ էր համարում, ցանկանում էր դրանցից ազատվել, սակայն դա տեղի չունեցավ: Մարզպետարանները շարունակում են մնալ մարզերում իշխանության ամրապնդման գործիքներ: Պետական կառավարման արդյունավետության տեսանկյունից մարզպետարանների անհրաժեշտությունը չկա, քանզի խոշորացված համայնքները կարող են առանց միջնորդ օղակի՝ մարզպետարանների անմիջականորեն հարաբերվել՝ համագործակցել կառավարության հետ:

2018թ. ապրիլին Ն. Փաշինյանը Իջեւանում կայացած բազմամարդ հանրահավաքում հայտարարեց, որ նոր Հայաստանում պաշտոնների չեն նշանակվելու խնամի-ծանոթ-բարեկամ (ԽԾԲ) սկզբունքով, սակայն ՔՊ-ական իշխանության օրոք կադրային նշանակումների մեծ մասը հենց այդ սկզբունքով է արվում: Տավուշի մարզն ունի 4 խոշոր համայնք՝ Իջեւան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ: Սակայն Տավուշի մարզպետի աշխատակազմի բոլոր աշխատողները Իջեւան համայնքի բնակիչներ են, կարելի է այն կոչել Իջեւանի մարզպետարան, ոչ թե Տավուշի: Ի տարբերություն Տավուշի մարզպետարանի, պետական այլ հիմնարկների՝ ԴԱՀԿ-ի, Պետական ռեգիստրի Տավուշի մարզային բաժիններում աշխատում են ոչ միայն Իջեւանի, այլ նաեւ մարզի Բերդ, Նոյեմբերյան համայնքների բնակիչներ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՈՒՆԻ

0 ԴՐԱՄՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել պաշտոնատար անձանց հայտարարագրերը: Այս անգամ ArmLur.am-ը ուսումնասիրել է Կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ռաիսա Գալստյանի ունեցվածքը եւ պարզել մի շարք ուշագրավ հանգամանքներ:

Ըստ հայտարարագրի՝ Ռաիսա Գալստյանը պաշտոնը զբաղեցնում է 2018 թվականի օգոստոսի 9-ից:

ArmLur.am-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2024 թվականին պաշտոնյան ձեռք է բերել անշարժ գույք՝ հողամաս Արագածոտնի մարզի Ապարանում: Հատկանշական է, որ գույքը ձեռք է բերվել «այլ» եղանակով եւ հայտարարագրված արժեքը նշված է 0 դրամ: Միեւնույն ժամանակ, ArmLur.am-ը պարզել է, որ Գալստյանը հայտարարագրել է նաեւ 90 եւ ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույքեր, մասնավորապես մեկ հողամաս Երեւան քաղաքում եւ մեկ անհատական բնակելի տուն՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով եւս Երեւան քաղաքում: Տրանսպորտային միջոց պաշտոնյան չի հայտարարագրել:

Դրամական միջոցների մասով ArmLur.am-ը արձանագրում է, որ նրա բանկային հաշիվներում առկա են եղել 1,417,855 դրամ եւ 2,853,567 դրամ մնացորդներ, իսկ կանխիկ դրամ չի նշվել: Իսկ ինչ վերաբերվում է պաշտոնյայի եկամուտներին, ապա ըստ հայտարարագրի՝ Ռաիսա Գալստյանը 2024 թվականին ստացել է 787,320 դրամ կենսաթոշակ՝ Մալաթիա-Սեբաստիայի սոցիալական ապահովության տարածքային բաժնից:

Նրա հիմնական եկամուտը ձեւավորվել է աշխատավարձից՝ «Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմին»-ից, որը կազմել է 11,387,037 դրամ: Ընդհանուր տարեկան եկամուտը կազմել է 12,174,357 դրամ:

Խնդրահարույց հարցեր

- Ինչպե՞ս է հնարավոր, որ 2024 թվականին ձեռք բերված հողամասը հայտարարագրված է 0 դրամ արժեքով, եւ ի՞նչ է նշանակում «այլ» եղանակով ձեռքբերում:
- Արդյո՞ք այդ գույքը նվիրատվություն է, թե՞ այլ գործարք, որը չի արտացոլում իրական շուկայական արժեքը:
- Ինչո՞ւ պաշտոնյան չի ներկայացրել այդ գործարքի ավելի մանրամասն բացատրություն:

Այս հարցերը մնում են առանց հստակ պատասխանների եւ առաջացնում են լրացուցիչ պարզաբանումների անհրաժեշտություն: Հատկապես այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է պաշտոնատար անձի գույքային դրությանը, յուրաքանչյուր նման գործարք պետք է լինի առավելագույն թափանցիկ եւ հիմնավորված: 0 դրամ արժեքով անշարժ գույքի ձեռքբերումը, անկախ դրա ձեւակերպումից, ենթադրում է հանրային հետաքրքրություն եւ պահանջում է հստակ մեկնաբանություն՝ հասկանալու համար գործարքի իրական բնույթն ու պայմանները:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՀԱՐՎԱԾՆԵՐ ԵՆ ՀԱՍՑՐԵԼ

Իսրայելը եւ Միացյալ Նահանգները նոր խոշոր հարվածների ալիք են սկսել Իրանի նկատմամբ, այն ժամանակ, երբ Թեհրանը շարունակել է պատասխան հարվածներ հարավային ու ծովային հարեւանների ուղղությամբ՝ վրդովված, որ իր էլեկտրակայանները կարող են դառնալ թիրախ:

Իսրայելի բանակը երկուշաբթի հայտարարեց, որ «սկսվել է լայնածավալ հարվածների ալիք» Թեհրանի ենթակառուցվածքների ուղղությամբ՝ առանց լրացուցիչ մանրամասներ հայտնելու:

Միացյալ Նահանգների կենտրոնական հրամանատարության (CENTCOM) ղեկավար Ադմիրալ Բրեդ Կուպերը մի հարցազրույցում հայտարարել է, որ Իրանը հրթիռներ եւ դրոններ է արձակում բնակեցված տարածքներից՝ նշելով, որ այդ տարածքները կարող են լինել թիրախ:

ԱՄՆ բանակը տեղեկացրել է, որ թիրախավորել է թռիչքային եւ դրոնների բաղադրիչների արտադրամաս Կոմ նահանգում, որը կապված է Իրանի Իսլամական հեղափոխական պահակազորի (IRGC) հետ:Al Jazeera-ի թեհրանական թղթակից Սուհաիբ ալ-Ասան հաղորդել է, որ մայրաքաղաքում պայթյունների չափն ու ծավալը «աննախադեպ» է, հատկապես քաղաքի արեւելյան հատվածում: Իրանի օդային պաշտպանության համակարգերը միացվել են այդ տարածքում, ինչը ցույց է տալիս, որ Թեհրանը արձագանքում է ԱՄՆ-Իսրայելյան դրոնների շարժմանը:

Իրանի Fars լրատվական գործակալությունը հայտնել է, որ Խորրամաբադ քաղաքի բնակելի շենքի վրա հարվածի հետեւանքով զոհվել է մեկ երեխա, վիրավորվել են մի քանի մարդ: Թեբրիզ քաղաքում հարձակման հետեւանքով առնվազն վեց մարդ է զոհվել:

«Ալ Ջազիրա»-ի թղթակից Տոհիդ Ասադին հաղորդում է, որ պայթյուններ են գրանցվել նաեւ այլ քաղաքներում՝ Բանդար Աբասում ռադիոկայանի վրա հարվածի հետեւանքով մահացել է մեկ մարդ, իսկ Իսֆահան, Կարաջ եւ Ահվազ քաղաքներում լսվել են խոշոր պայթյունների ձայներ: Ահվազում պայթյունի հետեւանքով վնասվել է նաեւ հիվանդանոցներից մեկը:

Իրանի Կարմիր խաչից հայտնել են, որ ավելի քան 80,000 քաղաքացիական շինություններ են տուժել, որոնց մի մասը ամբողջությամբ ավերվել է, այդ թվում՝ հիվանդանոցներ, դպրոցներ եւ ակադեմիական հաստատություններ:

Վերջին հարվածների ալիքը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը 48 ժամ տեւող վերջնագիր էր տվել Թեհրանին՝ բացել Հորմուզ նեղուցը բոլոր նավերի համար, այլապես սպառնալով «վերացնել» Իրանի էլեկտրակայանները: Թեհրանը հայտարարել է, որ նեղուցը կփակվի ամբողջովին, քանի որ այնտեղ է անցնում համաշխարհային նավթի մեկ հինգերորդ մասը:

Իրանի առողջապահության նախարարության տվյալներով՝ հակամարտության զոհերի թիվը գերազանցել է 1,500-ը, Իսրայելում՝ 15 զոհ:

ԱՄՆ եւ Իրան-Իսրայելյան հրթիռային հարվածները, ինչպես նաեւ տարածաշրջանի երկրների միջամտությունը՝ Սաուդյան Արաբիա, Բահրեյն, Քուվեյթ, մեկ անգամ եւս ընդգծում են Մերձավոր Արեւելքում լարվածության ծավալը եւ քաղաքացիական ենթակառուցվածքների վրա հարվածների վտանգը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Մարտի 18-ից 19-ը հայտնաբերվել է 5 հետախուզվող, կամավոր ներկայացել է 2-ը: Գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 5 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՅՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

«Թել-Սել» ընկերությունը տեղեկացնում է, որ այսուհետ Telcell Terminal-ների միջոցով կարող եք համալրել մի շարք բանկերում սպասարկվող հաշիվներ եւ քարտեր միայն նույնականացման միջոցով:

Ծառայությունից օգտվելու համար հետեւեք քայլերին.

- Ընտրեք Հաշվի կամ քարտի համալրում գործարքի տեսակը,
- մուտքագրեք անհրաժեշտ տվյալները,
- նույնականացված Telcell Wallet-ով սքանավորեք տերմինալի էկրանի QR կոդը,
- համակարգը ավտոմատ կներբեռնի Ձեր տվյալները,
- մուտքագրեք գումարը:

QR-ի սքանավորման 2-րդ տարբերակը.

- Սքանավորեք տերմինալի էկրանի QR կոդը հեռախոսի տեսախցիկով,
- սեղմեք էկրանին ցուցադրված հղումին,
- եթե ունեք Telcell Wallet, այն անմիջապես կբացվի,
- եթե չունեք Telcell Wallet, ավտոմատ կտեղափոխվեք App Store կամ Google Play այն ներբեռնելու համար:

Հարգելի հաճախորդներ, Telcell Terminal-ներով կարող եք համալրել հետեւյալ բանկերում սպասարկվող հաշիվներն ու քարտերը՝ Ameriabank, Ardshinbank, AraratBank, Amio Bank, AEB, Artsakhbank, ArmSwissBank, Evocabank, IDBank, Converse Bank, VTB Bank:

Մենք շարունակաբար աշխատում ենք նոր գործիքների ներդրման ուղղությամբ՝ նույնականացման գործընթացը դարձնելով ավելի պարզ եւ հարմարավետ: Շուտով կներկայացնենք նոր հնարավորություններ:

Շնորհակալություն մեզ ընտրելու եւ մեր ծառայություններից օգտվելու համար:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: (Գ)

ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայէկոնոմբանկի վճարային քարտերով աշխատավարձ ստացող ֆիզիկական անձինք կարող են ստանալ վարկային գիծ աշխատավարձի մինչեւ 15-ապատակի չափով, բայց ոչ ավելի քան.

- 5 մլն դրամ՝ մասնաճյուղերում դիմելիս,
- 3 մլն դրամ՝ AEB Mobile-ով:

Վարկային գիծը տրամադրվում է 12-48 ամիս ժամկետով՝ սկսած 13,5% տարեկան անվանական տոկոսադրույքով (փաստացի տոկոսադրույքը՝ սկսած 14,37%-ից):

Բանկի մասնաճյուղերում դիմելու դեպքում վարկային գծի տրամադրման մասին որոշումը կայացվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ AEB Mobile-ով՝ անմիջապես հայտը լրացնելիս:

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: (Գ)

TEAM

700 ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԵԿ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Ամփոփվել է «Հզոր համայնք» միջմարզային միջոցառումը: Team Telecom Armenia-ն, արդեն 5 տարի շարունակ լինելով միջոցառման կազմակերպիչ «Հզոր միտք» հասարակական կազմակերպության կողքին, այս անգամ եւս աջակցել է նախաձեռնությանը:

«Հզոր համայնք» միջոցառումը նպատակ ունի խթանելու երիտասարդների ակտիվությունը, նպաստելու նրանցկրթական եւ մասնագիտական կողմնորոշմանը, ձեւավորելու մարզեցի առաջնորդների սերունդ եւ նրանց միջոցով ապահովելու մարզերի համաչափ զարգացում: Միջոցառման հարյուրավոր մասնակիցները հնարավորություն են ունեցել հանդիպելու տարբեր ոլորտներում հաջողության հասած մասնագետների եւ գործարարների հետ, մասնակցելու քննարկումների ու սեմինարների, ինչպես նաեւ ներկայացնելու իրենց համայնքների զարգացմանն ուղղված գաղափարներն ու նախաձեռնությունները:

«Կրթությունն ու երիտասարդների շարունակական զարգացումը Team-ի ռազմավարական ուղղություններից են: «Հզոր համայնքը» հաջողությամբ համատեղում է այդ ուղղությունները՝ նպաստելով երիտասարդների՝ նոր գիտելիքների եւ փորձառությունների ձեռքբերմանը: Ուրախ ենք լինելու այնպիսի նախաձեռնությունների կողքին, որոնք խթանում են երիտասարդների առաջնորդական կարողությունները, ստեղծում արդյունավետ համագործակցության հարթակ եւ օգնում բացահայտելու նրանց ներուժը՝ միաժամանակ ձեւավորելով համայնքային առաջնորդների»,-նշում է Team Telecom Armenia-ի հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Գրիգորի Յուրինը:

«Հզոր համայնք» միջոցառումը երիտասարդների համար շատ կարեւոր օր է: Այն մարզերի երիտասարդների համար հնարավորություններ է ստեղծում ձեռք բերելու նոր եւ արժեքավոր կապեր Հայաստանի տարբեր մարզերի երեխաների եւ Հայաստանի շուրջ 100 առաջատար մասնագետների եւ գործարարների հետ: Միջոցառման մասնակիցները նաեւ ստանում են այնպիսի գիտելիքներ, որոնք դժվար է ձեռք բերել առօրյայում»,-նշում է «Հզոր միտք» ՀԿ նախագահ Մհեր Մկրտչյանը:

«Հզոր համայնք» նախաձեռնությանը աջակցելով՝ Team Telecom Armenia-ն շարունակում է հավատարիմ մնալ համայնքների զարգացմանը եւ երիտասարդների կրթությանը միտված իր ռազմավարությանը:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում:Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԴԱՌՆԱ ՆԵՏՏՈ ՆԵՐԿՐՈՂ

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Դավթյանը գրել է. «Իշխանությունները հիմա էլ խոսում եմ Հայաստանի ու Թուրքիայի էլեկտրաէներգետիկ համակարգերի միացման հեռանկարի մասին: Անգամ սկսել են Թուրքիայի կառավարության հետ ներդրումային հարցեր քննարկել: Ասում են՝ «Պատրաստ ենք օր առաջ սկսել»: Այլ պայմաններում տվյալ նախաձեռնությունը թերեւս կարելի էր ողջունել: Օրինակ՝ 2009-2010թ. «ֆուտբոլային դիվանագիտության» ժամանակ, երբ Թուրքիայում առկա էր էլեկտրաէներգիայի լուրջ պակասորդ, Հայաստանն էլ պատրաստ էր փակել դրա մի մասը: Ի վերջո, այդ ժամանակաշրջանում թե՛ տնտեսական, թե՛ անվտանգային միջավայրերը սկզբունքորեն տարբեր էին ներկայիս իրողություններից:

Այսօր իրավիճակը որակապես փոխվել է: Թուրքիան ոչ միայն դինամիկ տեմպերով հաղաթահարում է էլեկտրաէներգետիկ պակասորդը, այլեւ ռազմավարություն է որդեգրել առաջիկա տարիներին զարկ տալ արտահանմանը, ներառյալ հարավկովկասյան շուկաները: Վերջինիս նախադրյալներն առկա են՝ հատկապես հաշվի առնելով Թուրքիայում գեներացնող հզորությունների շարունակական աճը՝ Աքքույու ԱԷԿ, նոր ատոմային նախագծեր Սինոփում ու Ֆրակիայում, 750-ից ավել ՀԷԿ-եր եւ այլն:

Այս պայմաններում Հայաստանի ու Թուրքիայի էլեկտրաէներգետիկ համակարգերի միացումը մի բան է նշանակում՝ Հայաստանի վերածում նետտոներկրողի: Այս միտումը լրացուցիչ խորանում է մի քանի ներհամակարգային գործընթացներով:

Դրանցից առաջինը Երեւանի ընտրությունն է՝ հօգուտ փոքր մոդուլային ռեակտորի, որը երկարաժամկետ հեռանկարում փոխարինելու է բազային միջուկային հզորությունների ներկայիս մոդելը՝նվազեցնելով համակարգի ինքնաբավության մակարդակը:

Երկրորդը արեւային էներգետիկայի արագ ու քաոտիկ զարգացումն է, որը, ունենալով սահմանափակ արտահանման ներուժ եւ բարձր սեզոնային կախվածություն, չի կարող ապահովել բազային պահանջարկի կայուն ծածկույթ:

Երրորդը շուկայի ազատականացումն է, որը ստեղծում է բոլոր պայմանները արտաքին շուկաներից էլեկտրաէներգիա ներկրելու ու փաստացի Հայաստանի արտաքին կախվածությունն ավելացնելու համար:

Ակնկալվող արդյունքներ՝ պետական պարտքի ավելացում, էներգետիկ ինքնաբավության կտրուկ նվազում, անվտանգային նոր ռիսկեր»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԵԾ ՊԱՀՔ

«...ԱՅՆ ԺԱՄԻՆ, ԵՐԲ ՉԵՔ ՍՊԱՍԻ, ԿԳԱ ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ»

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին նվիրված է Հիսուս Քրիստոսի գալստյանը: Այս կիրակիի ընթացքում Եկեղեցին վերհիշում է նախ Փրկչի առաջին գալուստը, ապա անդրադառնում երկրորդ գալստյան խորհրդին: Ավետարանում գրված է, որ միայն Հորն է հայտնի, թե երբ եւ ինչպես է լինելու Քրիստոսի երկրորդ գալուստը: Նրանից բացի ոչ մեկ՝ ո՛չ հրեշտակներին, ո՛չ Որդուն, հայտնի չէ:

Ավետարանում նկարագրված է, որ Քրիստոսի երկրորդ գալուստը լինելու է անհայտ եւ մշուշով պատված. «Նեղության այդ օրերից անմիջապես հետո արեգակը կխավարի, եւ լուսինն այլեւս չի փայլի. աստղերը կընկնեն երկնքից, եւ երկնային մարմինները կսասանվեն:

Ապա Մարդու Որդու նշանը կերեւա երկնքում, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները կողբան, երբ տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է ամպերի վրա բազմած՝ զորությամբ եւ մեծ փառքով: Եւ երբ մեծաձայն փողը հնչի, նա իր հրեշտակներին կուղարկի, որպեսզի հավաքեն իր ընտրյալներին աշխարհի չորս կողմերից՝ երկնքի մեկ ծայրից մինչեւ մյուսը» (Մատթեոս 24:29-31): Ավետարանում նկարագրված են նաեւ այն ծառաները, որոնց Տերը արթուն է գտնելու եւ «Երանի՛ այն ծառաներին, որոնց արթուն կգտնի Տերը, երբ գա» (Ղուկաս 12:37):

Եւ Տերը հորդորում է նրանց նմանվել այդ ծառաներին, որոնք արթուն կսպասեն «որ իրենց տերը հարսանիքից վերադառնա, որպեսզի երբ գա եւ բախի դուռը, նրանք իսկույն բաց անեն» (Ղուկաս 12:36):

Քրիստոս իր երկրորդ գալուստը անվանել է «վերջին օրը» (Հովհաննես 6:39), «դատաստանի օր» (Մատթեոս 11:22-24), «Իր գալստյան օրը» (Ղուկաս 17:24), իսկ Պողոս առաքյալը անվանել է «Աստծո բարկության օր» (Հռոմեացիներ 2:5):

«Որ զխորհուրդ Քո Գալստեանդ
Յառաջագոյն գուշակեցեր մարգարէիւքն Իսրայելի
Զորս ընտրեցեր յետ Մովսեսի
Որք խոսեցան Հոգւով Սրբով բազմապատիկ օրինակօք,
Տուր մեզ Փրկիչ ողորմութիւն եւ զմեղաց զթողութիւն»:

Այս շարականը Գալստյան կիրակիի Օրհնության շարականն է, որը երգվում է Գալստյան կիրակիի նախորդ օրը՝երեկոյան ժամերգությանը, որպես Համբարձի շարական եւ Գալստյան կիրակին՝ որպես Օրհնություն, Ճաշու եւ Համբարձի շարական:

Պետք է միշտ հիշել, որ Քրիստոս իր առաջին գալուստով եկավ որպես Փրկիչ, եկավ եւ քանդեց դժոխքի կապանքները եւ բացեց դրախտի դռները, սակայն իր երկրորդ գալուստով նա գալու է, որ դատի մեղավորներին, իսկ արդարներին արժանացնի Երկնքի Արքայության:

«Իսկ որք ասեն՝էր երբեմն, յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ՝յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին, եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթուղիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Այսինքն՝կարեւոր է, որ մարդիկ գիտակցեն, կարեւորեն ու գնահատեն Քրիստոսի առաջին գալուստը եւ հարատեւ աղոթքով, Աստծու պատվիրանների կատարմամբ, հնազանդ ու նվիրված՝ Քրիստոսի խոսքին, իրենց ազնիվ ու բարի գործերով, պահքով արթուն կսպասեն ու կդիմավորեն «Տիեզերաց իշխանին»:

«Պատրաստ եղեք, որովհետեւ այն ժամին, երբ չեք սպասի, կգա Մարդու Որդին» (Ղուկաս 12:40):

ՁԵՌՔ ՁԵՌՔԻ ՏՎԱԾ ՁԲՈՍՆԵԼ ԵՆ ՏՈԿԻՈՅՈՒՄ

Քիմ Քարդաշյանը եւ Լյուիս Համիլթոնը լավ տրամադրություն ունեին, երբ շաբաթավերջին ձեռք ձեռքի տված զբոսնում էին Տոկիոյում:

Երկրպագուների լուսանկարներում երեւում է, թե ինչպես է SKIMS-ի աստղը ամուր բռնել իր ընկերոջ ձեռքը, մինչ նրանք գնումներ էին կատարում Քիմի քրոջ՝Քլոե Քարդաշյանի հետ: Ցերեկային զբոսանքի համար 45-ամյա Քիմը ընտրել էր երկար թեւքերով երկար մոխրագույն զգեստ եւ սեւ բարձրակրունկ կոշիկներ, մինչդեռ 41-ամյա Համիլթոնը հագել էր շագանակագույն կոստյում եւ բաճկոն:

Մի պահ մրցարշավորդը ձեռքով է արել հեռավոր երկրպագուին, մինչդեռ Քիմը լայն ժպտացել է Vivienne Westwood խանութից դուրս գալուց հետո: Զույգն առաջին անգամ հայտարարել է իրենց հարաբերությունների մասին 2026 թվականի փետրվարին՝ Մեծ Բրիտանիա կատարած ռոմանտիկ ուղեւորությունից հետո, որտեղ նրանք մնացել են Քոթսվոլդսի բացառիկ Estelle Manor-ում՝վայելելով մերսումներ եւ մասնավոր ընթրիքներ:

Այնուհետեւ նրանք մեկնել են Փարիզ, որտեղ նրանց նկատել են մասնավոր ինքնաթիռից դուրս գալիս եւ հյուրանոցում, իսկ Քիմը ներկայացրել է Էյֆելյան աշտարակի մոտ անցկացրած մտերիմ պահի տեսանյութ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՎԱՆԱԲԱՐ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է

Լոնդոնի «Արսենալի» եւ Ռուսաստանի հավաքականի նախկին ֆուտբոլիստ Անդրեյ Արշավինը բարձր է գնահատել Հայաստանի ազգային հավաքականի եւ «Կրասնոդարի» կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի խաղամակարդակը: Ռուսաստանի Պրեմիեր լիգայի 22-րդ տուրի «Նիժնի Նովգորոդի» դեմ կայացած վերջին խաղում (5-0) հայ կիսապաշտպանը դարձել էր 2 գոլային փոխանցման հեղինակ: «Նա արդեն շատ տարիներ կայուն կերպով ցուցադրում է իր մակարդակը: Շատ ուժեղ ֆուտբոլիստ է, որն, հավանաբար, արդեն գերազանցել է այն առաջնության մակարդակը, որտեղ ելույթ է ունենում»,- Արշավինի խոսքերը մեջբերում է Матч ТВ-ին: Ընթացիկ մրցաշրջանում Սպերցյանն ընդհանուր առմամբ մասնակցել է 31 հանդիպման՝դառնալով 12 գոլի եւ 16 արդյունավետ փոխանցման հեղինակ: Նշենք նաեւ, որ Transfermarkt պորտալը «ցուլերի» ավագի տրանսֆերային արժեքը գնահատում է 25 միլիոն եվրո:

ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Ապրիլի 19-26-ը Բաթումին ընդունելու է ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը: Եվրոպական ֆեդերացիան ներկայացրել է մասնակից երկրների հայտավորած մարզիկներին:

Հայաստանի տղամարդկանց ընտրանու կազմում ընդգրկված են Գառնիկ Չոլակյանը (60 կգ), Գոռ Սահակյանը (71 կգ), Տիգրան Կարապետյանը (79 կգ, պահեստային՝Մարտին Պողոսյան), Ռաֆիկ Հարությունյանը (88 կգ), Արա Աղանյանը (94 կգ, պահեստային՝ Դավիթ Հովհաննիսյան), Գարիկ Կարապետյանը, Սիմոն Մարտիրոսյանը (110 կգ) եւ Վարազդատ Լալայանը (+110 կգ): Թիմն առաջին անգամ է հանդես գալու Հակոբ Փիլոսյանի գլխավորությամբ, որը փոխարինել է Փաշիկ Ալավերդյանին:

Արտաշես Ներսիսյանը հայտավորել է Տանզելա Գրիգորյանին (53 կգ, պահեստային՝ Իզաբելա Յայլյան), Ալեքսանդրա Գրիգորյանին (58 կգ), Մերի Միսակյանին (69 կգ), Աննա Ամրոյանին, Ալինա Սուքիասյանին (77 կգ), Լիանա Գյուրջյանին, Էմմա Պողոսյանին (86 կգ) եւ Տաթեւ Հակոբյանին (+86 կգ):

ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ Է

Մարտի 28-ին Երեւանում կայանալիք Hype Fighting-ի երեկոյի ընթացքում հանդես կգա նաեւ ազատ ոճի ըմբիշ Արսեն Հարությունյանը: Եվրոպայի չեմպիոնի ու Աշխարհի բրոնզե մեդալակրի մրցակիցը դեռ գաղտնի է պահվում: Երեւանում ելույթ է ունենալու նաեւ Դավիթ Խաչատրյանը:

Hype Fighting-ի նախորդ մրցաշարը Երեւանում կայացել է դեկտեմբերի 30-ին, որի գլխավոր մենամարտում Արման Ծառուկյանը հանդիպել է Շարա Բուլատի հետ: Նրանց դիմակայությունն ավարտվել էր ոչ-ոքի արդյունքով:

● *Մարտի 25-ին՝ժամը 17:00-ին, Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա «Թոմ Սոյերի արկածները» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ստանալ բժշկական օգնություն եւ սպասարկում Հայաստանում, ԼՂ-ից բռնի տեղահանված եմ:

Անի Օհանյան, 64 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու համար անհրաժեշտ է գրանցվել բնակության վայրին մոտ գտնվող առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) հաստատություններից մեկում՝

- պոլիկլինիկաներ
- գյուղական առողջության կենտրոններ եւ ամբուլատորիաներ,
- ընտանեկան բժշկի գրասենյակներ

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրանցման պահից սկսած՝ բժշկական ցուցման դեպքում անվճար կօգտվեք առաջնային օղակում մատուցվող ծառայություններից՝

- բժշկի խորհրդատվություն եւ կանխարգելիչ զննություն,
- բժշկի կողմից տնային այցեր,
- դեղերի ապահովում,
- կանխարգելիչ պատվաստումների իրականացում,
- անհրաժեշտության դեպքում՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Գործատուն վերջնահաշվարկիս գումարը ղակաս է հաշվարկել, ղահումներ արել. ի՞նչ անեմ եւ ո՞ւմ դիմեմ:

Լուսինե Սարգսյան, 42 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքից ազատվելու դեպքում ազատման օրը կամ ոչ ուշ, քան աշխատողի նման պահանջ ներկայացնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, գործատուն պետք է կատարի վերջնահաշվարկ եւ այն վճարի աշխատողին:

Վերջնահաշվարկի մեջ են ներառվում աշխատանքի ազատման օրվա դրությամբ աշխատած եւ չվարձատրված օրերի համար աշխատավարձի գումարները, չօգտագործված արձակուրդի համար վճարումները, աշխատավարձին հավասարեցված այլ բոլոր վճարումները: Հաշվի առնելով, որ վերջնահաշվարկի գումարը եւս աշխատողի համար հանդիսանում է եկամուտ, այդ գումարից ենթակա են հարկերի վճարումներ, որոնք հենց այն պահումներն են, որոնք կատարվում են գործատուի կողմից:

Իսկ եթե կարծում եք, որ հաշվարկները գործատուի կողմից սխալ են կատարվել կամ պահումները ավել են եղել, ապա կարող եք այդ մասին դիմում ներկայացնել գործատուին՝ խնդրելով ներկայացնել այն հաշվարկը, որը կատարել է պահումները կատարելուց եւ վերջնահաշվարկը կազմելուց: Գործատուից ստանալով հաշվարկը՝ կարող եք ինքներդ կատարել համապատասխան հաշվարկը կամ էլ դիմել ցանկացած հաշվապահի՝ պարզելու կատարված հաշվարկների ճշգրտությունը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե պարզեք, որ հաշվարկը սխալ է կատարված եւ Ձեզ պակաս են վճարել վերջնահաշվարկը, ապա կարող եք դիմել գործատուին՝ պահանջելով վճարել պակաս վճարված վերջնահաշվարկը: Եթե գործատուն հրաժարվի վճարել կամ ցուցաբերի անգործություն, ապա պետք է դիմեք դատարան՝ վերջնահաշվարկի պակաս վճարված գումարը գանձելու պահանջով: Կարող եք պահանջել նաեւ, որ գործատուից գանձվեն տույժի գումարները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Ողբերգական ավտովթար Աբովյան քաղաքում. Kia-ն արմատից կոտրել է ծառն ու կողաշրջվել. կա 1 զոհ, 3 վիրավոր: Մահացածը ծառայում էր ՀՀ ՊՆ N զորամասում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 - 5 + 8 + 12
	Կոտայքի լեռներ	0 - 4 + 7 + 11
	Կոտայքի նախալեռներ	0 + 3 +12 + 15
	Գեղարքունիք	0 - 4 + 7 + 12
	Լոռի	- 1 + 4 + 13 + 17
	Տավուշ	0 + 3 +14 + 17
	Արագածոտնի լեռներ	- 1 - 5 + 7 + 11
	Արագածոտնի նախալեռներ	0 + 4 +11 + 16

	Արարատ	+ 2 + 6 +15 + 18
	Արմավիր	+ 2 + 6 +16 + 20
	Վայոց ձորի լեռներ	0 - 4 + 6 + 10
	Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 7 +16 + 19
	Սյունիքի լեռներ	0 - 4 + 5 + 9
	Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 +13 + 17
	Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 +20 +24
	Երեւան	+ 3 + 5 +17 +19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*